Ն ա խ ա գ ի ծ

արձանագրային

«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացնելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով:

ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2000թ. դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 8-րդ մասի «ը» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Պատվո վճարը հատկացվում է գիտական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացնող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս ծառայողական գործուղման մեկնած ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամներին»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության 2000թ. դեկտեմբերի 5-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասի "ը" ենթակետն ամրագրելով ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամներին ցմահ պատվովճար տրամադրելու դրույթը, միևնույն ժամանակ չի ճշգրտում տրամադրման պայմանները։

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելուց հետո անցած ժամանակահատվածում տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով մեր գիտնականների, այդ թվում նաև ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների մի մասը, հաճախ օգտվելով արտասահման երկարատև մեկնելու իրենց հնարավորությունից, ստեղծում են խնդիրներ, որոնք անհնարին են դարձնում ՀՀ ԳԱԱ կանոնադրությամբ նրանց վերապահված պարտականությունների կատարումը։

Հաշվի առնելով, որ հանրապետությունից երկարատև բացակայող և առանց կանոնադրական պարտավորությունները կատարելու պատվովճարի հատկացում պահանջող ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների թիվը էապես աճել է, նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության 2000թ. դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի մեջ լրացում կատարելու նախագծի ներկայացումը։

ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյան